

ՈՌՈՂՄԱՆ ՋՐԻ ՍԱԿԱԳՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եվգենյա ՅԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱՍ տնտեսագիտության
ինստիտուտի հայցորդ

Բանալի բառեր. ոռոգման ջուր, սակագին, ինքնահոս, մեխանիկական
ջրամատակարարում, ջրօգտագործող

Ջրային համակարգերի կառավարման արդյունավետությունը զգալիորեն պայմանավորված է ճիշտ սակագնային քաղաքականության իրականացմամբ: Հայտնի է, որ ջրամատակարարման ծառայությունների ներկայումս գործող սակագները թույլ չեն տալիս փոխհատուցել ոռոգման ջրի ինքնարժեքի հետ կապված ծախսերը, իսկ նշված ծախսերի հատուցման համար պետական բյուջեից անհրաժեշտ սուբսիդիաների հատկացման հնարավորությունները բավականին սահմանափակ են:

2005 թվականին հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից ընդունվեց ոռոգման ծառայությունների մատուցման սակագների մշակման մեթոդաբանություն, որում սահմանվում են ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերության կողմից ջրօգտագործողների ընկերություններին, և այլ ջրօգտագործողներին մատուցվող ծառայությունների սակագնային համակարգի մշակման սկզբունքները: Ըստ նշված որոշման, սակագնային համակարգերի մշակման առաջին փուլը համարվում է անհրաժեշտ հասույթի որոշումը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով`

ԱՀ= ԹԾ+Մ+ԹՇ-ԱԵ 2.2.1

որտեղ`

ԹԾ–ն թույլատելի տարեկան ծախսերն են,

Մ–ն հիմնական միջոցների տարեկան մաշվածությունն է,

ԹՇ–ն, թույլատրելի շահույթն է,

ԱԵ–ն այլ եկամուտներն են:

Թույլատրելի ծախսերն իրենց մեջ ներառում են սակագների հաշվարկման մեկ տարվա ընթացքում ծառայություններ մատուցելու համար կատար-

վող անհրաժեշտ ընթացիկ ծախսերը, որոնցից են շահագործման և պահպանման ծախսերը, ներառյալ՝ աշխատավարձերը, նպաստները, ինչպես նաև ոռոգման համակարգերի շահագործման և ընթացիկ վերանորոգման համար պահանջվող ծախսերը, հարկերը (բացի շահութահարկից և ավելացված արժեքի հարկից) և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուրքերն ու պարտադիր այլ վճարները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերը և այլն: Իսկ ծառայությունների մատուցման հետ չառնչվող ծախսերը չեն ընդգրկվում անհրաժեշտ հասույթի հաշվարկում:

Հիմնական միջոցների տարեկան մաշվածության գումարները հաշվարկվում են գծային մեթոդով՝ ելնելով ծառայությունների մատուցման համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից օգտակար և օգտագործվող ճանաչված հիմնական միջոցների սկզբնական արժեքից կամ ֆինանսական հաշվետվություններում դրան փոխարինող այլ գումարից և օգտակար ծառայության ժամանակահատվածից: Իսկ թույլատրելի է համարվում շահույթի այն մեծությունը, որը ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող ընկերությանը հնարավորություն է տալիս կատարել ակտիվների ֆինանսավորման համար ներգրավված կապիտալի հետ կապված պարտավորությունները և չխոչընդոտել նրա զարգացման համար անհրաժեշտ լրացուցիչ սեփական կամ փոխառու միջոցների ներգրավումը: Սակագնային համակարգի մշակման հաջորդ փուլը ծախսերի վերլուծությունն է ու սպառողներին և սպառողական խմբերին մատուցող ծառայությունների արժեքի որոշումն է: Ծախսերի վերլուծության համար ընկերությունը նախ իր կողմից սպասարկվող տարածքը բաժանում է մասնաճյուղերի կամ գետավազանների, որից հետո կատարվում է սպառողների խմբավորում: Վերջինս նշանակում է, որ սպառողները բաժանվում են ինքնահոս և մեխանիկական եղանակով սպասարկվողների: Ընկերության կողմից կատարվող ծախսերն իրենց հերթին լինում են ուղղակի և անուղղակի: Ուղղակի են համարվում այն ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրվում են տվյալ մասնաճյուղի կամ գետավազանի սպառողներին ծառայություններ մատուցելու համար կատարված ծախսերին: Ինքնահոս եղանակով սպասարկվող սպառողների համար դրանք հիմնականում ջրառի, ջրատարների և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործման և պահպանման հետ կապված ծախսերն են: Իսկ մեխանիկական եղանակով սպասարկվող սպառողների համար այդ ծախսերին է գումարվում նաև էլեկտրաէներգիայի ծախսը:

Իսկ անուղղակի ծախսերը կապված են միաժամանակ մի քանի գետավազանների հետ և դրանք ուղղակիորեն չեն վերագրվում որևէ գետավազանի:

Սակագների համակարգի մշակման վերջին և եզրափակիչ փուլը դա յուրաքանչյուր գետավազանին ինքնահոս և մեխանիկական եղանակով սպասարկվող սպառողների խմբերի սակագնային դորւյքների որոշումն է: Այն հաշվարկվում է համապատասխանաբար ինքնահոս և մեխանիկական համար հետևյալ բանաձևերի միջոցով՝

$$U_i^h = \frac{\sigma_{ni}^h + \sigma_{wi}^h}{\Sigma \sigma_i^h} \quad 2.2.2$$

$$U_i^d = \frac{\sigma_{ni}^d + \sigma_{wi}^d}{\Sigma \sigma_i^d} \quad 2.2.3$$

որտեղ σ_{ni}^h և σ_{ni}^d - i-րդ գետավազանի համապատասխանաբար ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի կողմից հատուցվող ուղղակի ծախսերի մասնաբաժիններն են,

σ_{wi}^h և σ_{wi}^d - i-րդ գետավազանի համապատասխանաբար ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի կողմից հատուցվող անուղղակի ծախսերի մասնաբաժիններն են,

$\Sigma \sigma_i^h$ և $\Sigma \sigma_i^d$ - i-րդ գետավազանի համապատասխանաբար ինքնահոս և մեխանիկական եղանակներով սպասարկվող սպառողական խմբերի կողմից տարվա ընթացքում ծախսվող ոռոգման ջրի ծավալներն են:

Աղյուսակ 1. Ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների սակագները¹

Կազմակերպության անվանումը	Չափի միավորը	սակագինը	
		առանց ԱԱՀ-ի	ԱԱՀ-ով
Սևան-Հրազդանյան ջրառ ինքնահոս/մեխանիկական	դրամ/խ.մ	0.85 / 9.60	1.01 / 11.52
Ախուրյան-Արաքս ջրառ ինքնահոս/մեխանիկական	դրամ/խ.մ	0.59 / 4.11	0.71 / 4.94

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված են համապատասխան սակագներ՝ ըստ ինքնահոս և մեխանիկական եղանակներով ջրամատակարարման (աղյուսակ 1):

¹ Աղյուսակը կազմվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական կայքի տվյալների հիման վրա, <http://psrc.am/am/?nid=229>

Ջրային համակարգերի կառավարման ոլորտում արդյունավետ սակագնային քաղաքականության իրականացման հիմնախնդիրներից մեկն էլ կապված է այն բանի հետ, որ ներկայումս ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների գործող սակագները սահմանված են որպես միասնական գին $1մ^3$ օգտագործված ջրի դիմաց և իրենց մեջ փոփոխական դրույքներ չեն պարունակում: Այսինքն՝ օգտագործված ջրի համար միասնական և առանց տարբերակման սակագնի սահմանումը հանգեցրել է այնպիսի սակագների կիրարկմանը, որոնցում հաշվի չեն առնվում ջրային ռեսուրսների օգտագործումը տարբեր տնտեսական, սոցիալական և տարածաշրջանային պայմաններում գտնվող սուբյեկտների կողմից, նրանց գնողունակությունը, պահանջարկը, տարբեր տարածաշրջանների տնտեսական զարգացման միտումները: Այս իմաստով առանձնապես կարևորվում է բազմադրույքային սակագների կիրառման հետ կապված հիմնախնդիրը:

Եվգենյա ՅԱԿՈՒՅԱՆ

Ոռոգման ջրի սակագների որոշման մեթոդաբանությունը

Բանալի բառեր. ոռոգման ջուր, սակագին, ինքնահոս, ջրամատակարարում

Ոռոգման ջուրը մատակարարվում է որոշակի սակագնի հիման վրա, որը վճարում են ջրօգտագործողները՝ սպառված ջրի ծավալներին համապատասխան: Փորձ է արվել ներկայացնել սակագին որոշելիս կիրառվող մեթոդաբանությունը: Ջրամատակարարման ծառայությունների գործող սակագները թույլ չեն տալիս փոխհատուցել ոռոգման ջրի ինքնարժեքը, ինչն էլ հիմնավորում է պետության միջամտության, աջակցության կարևորությունը:

Yevgenya HAGOPYAN

The method of defining the rates of irrigation water

Keywords: Irrigation water, rate, mechanical and gravity flow water supply, water user

Irrigation water is supplied by a certain rate which water users pay accordingly to the volume of water supplied to them. The method of defining the rates of irrigation water is presented in the article. Current rates of water services is not possible to compensate for the cost of sales irrigation water, which justifies the importance of state support.

Евгения АКОПЯН

Методика определения тарифов ирригационных вод

Ключевые слова: ирригационная вода, тариф, механическое, самотечное водоснабжение

Оросительная вода поставляется по определенному тарифу, который платят водопользователи соответственно объему потребляемой ими воды. В рамках статьи была представлена методика определения тарифов ирригационных вод. Текущие ставки услуг водоснабжения не позволяют компенсировать затраты по себестоимости оросительной воды, что и оправдывает важность государственной поддержки и вмешательства.